



**USAID**  
FROM THE AMERICAN PEOPLE

# ՀԳՄԾ Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագիր

Այս թողարկման մեջ

- 1 ՀԳՄԾ ֆորումը քննարկում է Հայաստանի միջազգային պարտավորությունները կոռուպցիայի դեմ պայքարում
- 1 ՀԳՄԾ-ը նախաձեռնում է հակակոռուպցիոն ռազմավարության նախագծի մշակման գործընթացի հանրային քննարկում
- 2 ՀԳՄԾ-ի կազմակերպած ուսումնական այցի ընթացքում Վերահսկիչ պալատի ներկայացուցիչները ծանոթանում են միջազգային լավագույն փորձին
- 2 ՀԳՄԾ-ն իրականացնում է կոռուպցիայի վերաբերյալ տնային տնտեսությունների առաջին հարցումը
- 3 ՀԳՄԾ-ն ընտրում է ՀԿ-ներ՝ երիտասարդությանն ուղղված հաղորդումներ պատրաստելու դրամաշնորհների համար
- 3 ՀԳՄԾ-ի սեմինարը անդրադառնում է կոռուպցիայի դեմ պայքարում մարդու իրավունքներին
- 3 ՀԳՄԾ-ն կազմակերպում է տարեկան ծրագրային հայտարարությանը ներկայացմանը նվիրված հանդիպումներ
- 4 ՀԳՄԾ և Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովը մշակում են հակակոռուպցիոն ինտեգրացիոն ինտեգրացիոն կայք
- 4 Բողոքարկման հարցերով փորձագետները անցել են աշխատանքի
- 5 ՀԳՄԾ-ն կազմակերպում է «Կոռուպցիան առողջապահության ոլորտում» թեմայով դասընթաց
- 6 ՀԳՄԾ-ն հայտարարում է Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնների հիմնադրման երկրորդ շրջանին մասնակցության հայտերի ընդունում

## Գործունեության լրատվաթերթիկ Հուլիս-Սեպտեմբեր 2008 1-ին մաս, 3-րդ թողարկում

### ՀԳՄԾ ֆորումը քննարկում է Հայաստանի միջազգային պարտավորությունները կոռուպցիայի դեմ պայքարում

ՀԳՄԾ-ը պարբերաբար գումարում է կոռուպցիայի դեմ պայքարի շուրջ տարբեր թեմաներով ֆորումներ քաղաքացիներին, պետական հաստատություններին, քաղաքացիական հասարակության կազմակերպություններին (ՔՀԿ), ՋՄՄ-ներին և դրոճոր համայնքին կոռուպցիայի և հակակոռուպցիոն մոտեցումների մասին հանրային երկխոսության մեջ ներգրավելու նպատակով:

Ֆորումները մասնակիցներին հրավիրում են փոխանակելու կոռուպցիայի դեմ պայքարի մասին գիտելիք և սովորելու հակակոռուպցիոն ոլորտում աշխատող իրենց գործընկերներին:

**Տես էջ 5` ՀԳՄԾ ֆորումը քննարկում է...**



Վարչապետ Տիգրան Սարգսյանը դիմում է ֆորումի մասնակիցներին

### ՀԳՄԾ-ը նախաձեռնում է հակակոռուպցիոն ռազմավարության նախագծի մշակման գործընթացի հանրային քննարկում

Հակակոռուպցիոն նախաձեռնություններն ավելի արդյունավետ են դառնում, երբ իրականացվում են հանրության ակտիվ մասնակցությամբ: Հայաստանի նոր հակակոռուպցիոն ռազմավարությունն ավելի արդյունավետ դարձնելու համար ՀԳՄԾ-ի դրամաշնորհառու Հայաստանի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ը 2008թ. սեպտեմբերի ընթացքում կազմակերպել էր հանրային քննարկումներ ռազմավարության նախագծի առաջին երկու գլուխների շուրջ: Այդ միջոցառումների շնորհիվ հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի իրականացման հանձնաժողովը ռազմավարության նախագծի մշակման ընթացքում մշտական հետադարձ կապ է պահպանում քաղաքացիական հասարակության հետ:



Հանրային լսումները Վանաձորում

Սեպտեմբերի 11-ին Լոռու մարզի Վանաձոր քաղաքում տեղի ունեցավ առաջին քննարկումը, որին մասնակցում էին տեղական տասներկու ՀԿ-ներ: Ինֆորմացիայի ազատություն կենտրոնի տնօրեն Շուշան Դոյոյանը խոսեց նախորդ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մասին և ներկայացրեց հիմնական նվաճումները

**Տես էջ 4` ՀԳՄԾ նախաձեռնում է**

**ԱՄՆ ՄՁԳ  
Հակակոռուպցիոն  
գործողության  
մոբիլիզացման  
ծրագիր (ՀԳՄԾ)**

Տերյան 105/1,  
804 սենյակ  
ՀՀ, ք. Երևան, 0009

Հեռ.՝ +374 10 514835  
Ֆաքս՝ +374 10 514836  
Էլ. փոստ՝ info@maac.am  
www.maac.am



Նորթ Ֆեյրֆաքս 1199, Երրորդ  
հարկ  
ԱՄՆ, 22314, Ալեքսանդրիա

Հեռ.՝ 703 920 1234  
Ֆաքս՝ 703 920 5750  
Էլ. փոստ՝  
info@casals.com  
www.casals.com

Սույն լրատվաթերթիկը թողարկվել է ԱՄՆ ժողովրդի և Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄՁԳ) օժանդակությամբ: Լրատվաթերթիկի բովանդակության համար պատասխանատու է միմիայն Կասալս Ենդ Ասոշիեյթս Ինք. ընկերությունը, և այն կարող է չարտացոլել ԱՄՆ ՄՁԳ կամ ԱՄՆ Կառավարության տեսակետները:

## ՀԳՄԾ-ի կազմակերպած ուսումնական այցի ընթացքում Վերահսկիչ պալատի ներկայացուցիչները ծանոթանում են միջազգային լավագույն փորձին

Անցյալ տարի անկախ կարգավիճակ ստանալուց հետո Հայաստանի Վերահսկիչ պալատը (ՎՊ) ձեռնարկել է ինստիտուցիոնալ զարգացման գործընթաց: ՀԳՄԾ-ն աջակցում է ՎՊ ջանքերին՝ ուղղված կարողությունների հզորացմանն ու գործուն աուդիտորական հաստատություն դառնալուն: ՎՊ-ին իր նպատակներն իրականացնելու գործում օժանդակելու համար ՀԳՄԾ-ը, հուլիսի 20-ից 30-ը կազմակերպեց ուսումնական այց Բուլղարիա՝ նպաստելու կազմակերպչական կառավարման ոլորտում ՎՊ-ի վերջինս գիտելիքների զարգացմանը:



ՎՊ պատվիրակությունը Բուլղարիայի ազգային աուդիտորական գրասենյակում (աղբյուր՝ Բուլղարիայի ազգային աուդիտորական գրասենյակի կայք)

Ուսումնական այցն ուներ մի քանի հիմնական նպատակ՝ աջակցել ՎՊ-ին զարգացնելու իր դերը որպես Հայաստանի գերագույն անկախ աուդիտորական հաստատություն, մասնակիցներին ծանոթացնելու կեղծիքի բացահայտման, կոռուպցիայի և հանրային միջոցների չարաշահումների կանխարգելման նպատակով բուլղարացի աուդիտորների կողմից կիրառվող տեղեկատվական ու վերլուծական համակարգերին և այցելելու Բուլղարիայի աուդիտորների վերապատրաստման կենտրոն:

Պրոֆեսոր Վալերի Դիմիտրովը՝ Բուլղարիայի ազգային աուդիտորական գրասենյակի (ԱԱԳ) նախագահը, ողջունեց մասնակիցներին: Նա դասախոսություն կարդաց «Բուլղարիայի ԱԱԳ-ի դերը, իրավական դաշտը, լիազորությունները, ստորաբաժանումները և կառուցվածքը» թեմայով և ներկայացրեց ԱԱԳ-ի ռազմավարական զարգացման ծրագիրը: Հայաստանի ՎՊ ներկայացուցիչները ծանոթացան Բուլղարիայի ԱԱԳ-ի աուդիտի ստանդարտներին ու ընթացակարգերին, տեղեկացան, թե ինչպես են այնտեղ կիրառվում աուդիտի համակարգերը աուդիտների կառավարման ու դրանց որակի ապահովման համար: Հայաստանի ՎՊ ներկայացուցիչները ծանոթացան նաև Բուլղարիայի ԱԱԳ-ի վարչական կողմին՝ ինչպես է այն ընտրում աշխատողներ, կառավարում իր տեղեկատվական տեխնոլոգիաների քաղաքականությունը և իրականացնում հաղորդակցության ռազմավարություն: Ուսումնական այցի մասնակիցները նաև տեղեկացան այն մասին, թե ինչպես է Բուլղարիայի ԱԱԳ-ը պահպանում իր անկախությունը Բուլղարիայի Ազգային ժողովի և այլ պետական մարմինների հետ աշխատելու ընթացքում:

Մասնակիցներն այցելեցին ԱԱԳ տարածքային կենտրոն Պլովդիվում՝ տեղական մակարդակով ծանոթանալու աուդիտի գործնական կողմերին: Ուսումնական այցի այդ մասը նվիրված էր ԱԱԳ-ի, տեղական իշխանությունների և տեղական ինքնակառավարման մարմինների այլ կառույցների միջև հարաբերություններին, ընդգծելով համագործակցության եզրերը:

Բուլղարիան ընտրվել էր որպես Հայաստանի ՎՊ-ի ուսումնական այցի երկիր երկու երկրների արտաքին աուդիտորական համակարգերի միջև պատմական նմանությունների պատճառով: Ավելին, Բուլղարիայի ԱԱԳ-ի վերջին կառուցվածքային և կազմակերպական փոփոխությունները՝ ի պատասխան երկրի անդամակցությանը Եվրոպական Միությանը, և կեղծիքի բացահայտման ու կոռուպցիայի դեմ պայքարի նպատակով աուդիտի միջազգային ստանդարտների կիրառման հաջողության Բուլղարիայի ԱԱԳ - ին դարձնում են գերազանց մոդել Հայաստանի ՎՊ-ի համար:

## ՀԳՄԾ-ն իրականացնում է կոռուպցիայի վերաբերյալ տնային տնտեսությունների առաջին հարցումը

Կոռուպցիայի վերաբերյալ հանրության ընկալումները չափելու համար ՀԳՄԾ-ը կազմակերպում է հարցումներ Հայաստանում տնային տնտեսությունների, գործարար համայնքի և պետական պաշտոնյաների շրջանում: Երկրում կոռուպցիայի վերաբերյալ տնային տնտեսությունների առաջին հարցումը կներկայացնի արժեքավոր տվյալներ հակակոռուպցիոն որոշումները հիմնավորելու համար: Տնային տնտեսությունների հարցումը չափում է բնակիչների հանդուրժողականությունը կոռուպցիայի նկատմամբ, կոռուպցիայից տուժած լինելու դեպքերը, կոռուպցիայի դեմ պայքարի գործիքների իմացությունը և տեղեկացվածությունը կառավարության հակակոռուպցիոն նախաձեռնությունների մասին: Ընդհանուր առմամբ հարցման են ենթարկվելու տնային տնտեսությունների քվեարկելու տարիք ունեցող ավելի քան 1500 բնակիչ: Հետազոտությունն ընդգրկում է Հայաստանի բոլոր մարզերը, հարցումներն իրականացնելով յուրաքանչյուր մարզի բնակչության թվին համամասնորեն:

Հարցման աշխատանքները տեղերում սկսվել են սեպտեմբերի կեսերին և կավարտվեն հոկտեմբերի սկզբին: Արդյունքում ստացված տվյալները կմշակվեն և վերլուծության կենթարկվեն հոկտեմբեր և նոյեմբեր ամիսների ընթացքում, իսկ արդյունքները նախատեսվում է ներկայացնել մինչև 2008թ. դեկտեմբեր ամիսը: ՀԳՄԾ-ն իրականացնելու է սեմինարներ՝ նվիրված հարցման ընթացքում ձեռք բերված տվյալների վերլուծությանը, այնպես որ շահագրգիռ կողմերը կարող են հարցման տվյալներն օգտագործել իրենց ուրույն հետազոտությունների իրականացման համար:

2009թ. ՀԳՄԾ-ը անց է կացնելու գործարարների ու պետական պաշտոնյաների շրջանում կոռուպցիայի ընկալման վերաբերյալ նախատեսված երկու հարցումներից առաջինը: Այդ հարցումների ընթացքում բացահայտված փաստերը միակցվելու են տնային տնտեսությունների հարցման արդյունքներին հանրային կոռուպցիայի տարածման մասշտաբն ավելի լավ ախտորոշելու համար:

## ՀԳՄԾ-ն ընտրում է ՀԿ-ներ՝ Երիտասարդությանն ուղղված հաղորդումներ պատրաստելու դրամաշնորհների համար

Երբ երիտասարդ սերունդները կոռուպցիան ընդունում են որպես առօրյա կյանքի անխուսափելի մաս, այն կարող է արմատավորվել հասարակության մեջ: Կոռուպցիայի «օրորոցից» գերեզման» շրջափուլը կտրելու հույսով, ՀԳՄԾ-ը հատկացնում է դրամաշնորհներ երիտասարդությանն ուղղված զանգվածային լրատվամիջոցների (ԶԼՄ) նախաձեռնությունների համար, որոնք նպատակն է մոբիլիզացնել երիտասարդությանը կոռուպցիայի դեմ պայքար գործում: Այդ դրամաշնորհների միջոցով ՀԳՄԾ-ը հույս ունի մեծացնել երիտասարդների իրազեկությունը կոռուպցիայի էության, դրա կարճաժամկետ և երկարաժամկետ ազդեցությունների և կոռուպցիայի նկատմամբ հասարակական նոր վերաբերմունքի մասին: Դրամաշնորհները օգտագործվելու են հեռարձակվող ԶԼՄ-ների միջոցով լայն լսարանին հստակ հակակոռուպցիոն ուղերձներ հղելու համար:

Վերջերս ՀԳՄԾ-ն առանձնացրել է նորարարական դրամաշնորհային առաջարկներ ունեցող երկու կազմակերպություն, որոնք ունեն երիտասարդական լայն լսարանին գիտելիք հասցնելու ներուժ: Ներկայումս ՀԳՄԾ-ն աշխատում է այդ դրամաշնորհառուների հետ նախքան դրամաշնորհային միջոցները հատկացնելը նրանց նախաձեռնությունները կատարելագործելու ուղղությամբ:

«Այս դրամաշնորհային ծրագիրը եզակի է այն իմաստով, որ ունի երկու նպատակ՝ առաջինը, այն մեծացնում է երիտասարդության իրազեկությունը կոռուպցիայի մասին և ազդելով երիտասարդության վրա, նրանց ներ է քաշում հակակոռուպցիոն շարժման մեջ, և երկրորդ, այն հզորացնում է երիտասարդության հետ աշխատող ԶԼՄ-ների կարողությունները, որը կունենա երկարաժամկետ հակակոռուպցիոն ազդեցություն», ասաց ՀԳՄԾ-ի ծրագրի ղեկավար Ֆրանսուա Վեգինան: «Մենք շատ ոգևորված ենք այս դրամաշնորհային ծրագրով և դրանից ակնկալվող արդյունքներով»:

## ՀԳՄԾ-ի սեմինարը անդրադառնում է կոռուպցիայի դեմ պայքարում մարդու իրավունքներին

Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) աշխատակազմին մարդու իրավունքների պաշտպանության և կոռուպցիայի դեմ պայքարի միջև կապին ծանոթացնելու համար ՀԳՄԾ-ը ՄԻՊ աշխատակազմի համար հուլիսի 1-ին կազմակերպեց մեկօրյա ուսուցողական սեմինար, որը վարում էր Ժնևի Մարդու իրավունքների քաղաքականության միջազգային խորհրդի ներկայացուցիչ արն. Քրիստիան Գրուենբերգը:



Քրիստիան Գրուենբերգը վարում է սեմինարը

Սեմինարի ընթացքում ՄԻՊ աշխատակազմը ծանոթացավ մարդու իրավունքների և կոռուպցիայի միջև հայեցակարգային ու գործնական կապերին, բերվեցին կոռուպցիայի դեմ պայքարում որոշ ՄԻՊ աշխատակազմերի ու մարդու իրավունքների պաշտպանների ներգրավվածության օրինակներ և նախաձեռնվեց քննարկում այն հարցի շուրջ, թե ինչպես է ՄԻՊ-ը կարող իրականացնել գործողությունների ծրագիր՝ մեծացնելու Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի իր կարողությունը: Սեմինարը հանդիսանում էր հակակոռուպցիոն աշխատանքներն իր օրակարգում ներառելու ՄԻՊ-ի առաջին փորձը: ՀԳՄԾ-ը նախատեսում է հետագա համագործակցություն ՄԻՊ-ի հետ՝ աջակցելու վերջինիս կարողությունների հետագա հզորացմանն ու կազմակերպական զարգացմանը:

## ՀԳՄԾ-ն կազմակերպում է տարեկան ծրագրային հայտարարությանը ներկայացմանը նվիրված հանդիպումներ

Կոռուպցիայի դեմ պայքարում քաղաքացիական հասարակության դերի ուժեղացումը հանդիսանում է ՀԳՄԾ-ի առաջնային գերակայությունը: Փետրվարին ՀԳՄԾ հրապարակեց իր Տարեկան ծրագրային հայտարարությունը՝ տրամադրելու դրամաշնորհներ քաղաքացիական հասարակության կազմակերպություններին (ԶՀԿ-ներ), որոնք շահագրգռված են կոռուպցիան կանխելու և/կամ նվազեցնելու ծրագրեր և միանգամայն միջոցառումներ իրականացնելու մեջ: Այս տարի օգոստոսին ՀԳՄԾ ևս մեկ անգամ հրապարակել է իր Տարեկան ծրագրային հայտարարությունը ԶԼՄ-ների և չորս քաղաքներում ներկայացման հանդիպումներ իրականացնելու միջոցով՝ Սևանում, Պավառում, Մարտունիում և Եղեգնաձորում: ՀԳՄԾ-ն խրախուսում է Հայաստանի ԶՀԿ-ներին՝ դիմելու հակակոռուպցիոն նորարարական նախաձեռնությունների ֆինանսավորման համար:

Ընդհանուր առմամբ օգոստոսի 9-12-ը կազմակերպած կողմնորոշման հանդիպումներին մասնակցեցին զանազան ԶՀԿ-ների 40 ներկայացուցիչ: Հանդիպումների ժամանակ ՀԳՄԾ աշխատակիցները ներկայացրեցին Տարեկան ծրագրային հայտարարության նպատակները, նկարագրեցին դիմելու ընթացակարգը և պատասխանեցին մասնակիցների հարցերին:

Ծրագրային հայտարարությունը կարդալու համար խնդրում ենք այցելել <http://www.maac.am/aps.htm>

# ՀԳՄԾ և Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովը մշակում են հակակոռուպցիոն նախաձեռնությունների

ՀԳՄԾ-ի գերակայություններից մեկը Հայաստանի կառավարության հաստատություններին օժանդակելն է իրենց ներքին և արտաքին հաղորդակցությունների ռազմավարությունների մշակման և իրականացման գործում՝ հակակոռուպցիոն նախաձեռնությունների տեսանկյունից մեծացնելու համատեքստում: ՀԳՄԾ-ը ներկայումս աշխատում է Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի հետ՝ կառուցելու Հանձնաժողովի ինտերնետային կայքը որպես ինտերակտիվ գործիք, որի նպատակն է հանրությանը զինել կոռուպցիայի դեմ պայքարի գործում ՀՀ կառավարության օժանդակելու համար:



ՀԳՄԾ կայքի ապագա տեսքը

Այս տարվա սկզբին ՀԳՄԾ-ն իրականացրել է Հանձնաժողովի ինտերնետային կայքի տեսլականի և դրանից ակնկալիքների վերաբերյալ հետազոտություն, որի հիման վրա ՀԳՄԾ-ը մշակել է կայքի ամբողջությամբ գործող նախատիպ և այն ներկայացրել է Հանձնաժողովին, որն էլ իր հերթին ՀԳՄԾ-ին տրամադրել է իր կարծիքն ու դիտողությունները: Դրանից հետո վեբ դիզայնով զբաղվող տեղական Broncoway ընկերությունն իրականացնելու է կայքը վերջնական տեսքի բերելու աշխատանքները: Այս ինտերնետային կայքը տեղեկություններ է տրամադրելու Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա Գործողությունների ծրագրի մշակման մասին:

Այն ներկայացնելու է Հակակոռուպցիոն ռազմավարության առնչվող նորություններն ու դեպքերը, ունի հաճախ տրվող հարցերի էջ և հատուկ էջեր, որոնք պարունակում են քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, գործարարների, քաղաքացիների, ուսանողների, պետական պաշտոնյաների և լրագրողների հատուկ կարիքները բավարարող տեղեկություններ: Առանձին մի բաժին պարունակելու է կոռուպցիայի և հակակոռուպցիոն պայքարի վերաբերյալ բոլոր տեսակի ռեսուրսներ ու փաստաթղթեր: Ինտերնետային կայքի ինտերակտիվ առանձնահատկություններից է Հանրության ընդունելության առցանց կենտրոնը, որտեղ քաղաքացիները կարող են հարցեր տալ Հանձնաժողովի փորձագետներին առցանց: Այցելուները նաև հնարավորություն են ունենալու մասնակցել կոռուպցիային նվիրված առցանց հարցախույզերին և դիտել նախկին հետազոտությունների արդյունքները: Ինտերնետային կայքի մեկնարկը նախատեսվում է 2009թ. սկզբին:

## Բողոքարկման հարցերով փորձագետները անցել են աշխատանքի

ՀԳՄԾ-ի ռազմավարական նպատակն է ստեղծել բողոքներին արձագանքելու մեխանիզմ՝ Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոններ (ՇՊԱԿ), որոնք իրենց ազդեցությունը կունենան համակարգային և ընթացակարգային փոփոխությունների վրա: ՇՊԱԿ-երը քաղաքացիներին կտրամադրեն կոռուպցիայի դեպքերի մասին տեղեկացնելու և նրանց բողոքների մշակման գործում իրավական աջակցության հետ միասին բողոքները կառավարական մարմիններին ուղղելու հնարավորություններ:

Բողոքարկման փորձագետները, ուսուցում անցած լինելով վարչական, քաղաքացիական և քրեական իրավունքի ոլորտներում, կօգնեն ՇՊԱԿ-ի աշխատակազմին ձեռք բերել քաղաքացիներին աջակցելու հմտություններ: ՀԳՄԾ-ը հավաքագրել է բողոքարկման չորս տեղական փորձագետ, ովքեր կանցկացնեն հիմնական ուսուցում ՇՊԱԿ-ի իրավաբանների համար: Փորձագետներն իրականացնում են Հայաստանի օրենսդրության խորացված վերլուծություն, հավաքելով նախկինում կոռուպցիային առնչվող դեպքերի օրինակներ և իրենց տրամադրության տակ գտնվող իրավական միջոցներից կազմելով գործիքների համախումբ՝ ապահովելու իրավական գործողությունների դիմել ցանկացող քաղաքացիների իրավունքները: Հանրության համար կենտրոնները բացելուց հետո, բողոքարկման հարցերով փորձագետները կհզորացնեն ՇՊԱԿ-ի փաստաբանների իրավաբանական կարողությունները քաղաքացիների կողմից բարձրացված կոռուպցիային վերաբերող կոնկրետ հարցերի շուրջ աշխատանքի վայրում ուսուցումներ անցկացնելու միջոցով:

### ՀԳՄԾ-ն նախաձեռնում է... էջ 1

ինչպես նաև բացթողումներն ու քաղած դասերը: Նախքան քննարկումների սկիզբն ազդարարելը, տկն. Դոյոյանը ներկայացրեց նաև ռազմավարության առաջին երկու գլուխները: Որոշ մասնակիցներ մտահոգություն արտահայտեցին փաստաթղթի իրականացման արդյունավետության վերաբերյալ, մինչդեռ ուրիշները հանգեցին եզրակացության, որ քաղաքական կամքը մեծապես կազդի ռազմավարության արդյունավետության վրա:

Կլոր սեղանի շուրջ քննարկմանը հետևեց թոք-շոու Լոռու մարզի հեռուստատեսությամբ: ՀԿ տասը ներկայացուցիչ քննարկեցին իրենց ռազմավարության խոշոր նվաճումներն ու բացթողումները և իրենց ակնկալիքները նորից: Հաջորդ կլոր սեղանը տեղի ունեցավ սեպտեմբերի 18-ին, Գյումրիում, Շիրակի մարզ, որին մասնակցում էին ներկայացուցիչներ 26 ՀԿ-ներից և ՋԼՄ-ներից: Հիմնական բանախոսը հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի փորձագետների խմբի ղեկավար պրն. Արմեն Խուդավերդյանն էր: Նախքան նախագծի նոր գլուխների բովանդակությունը ներկայացնելը, պրն. Խուդավերդյանը խոսեց միջազգային լավագույն փորձի մասին: Քննարկման արդյունքում մասնակիցների կողմից մշակվեցին մի շարք առաջարկություններ, որոնք կներկայացվեն փորձագետների խմբի հետագա քննարկումներին: «Հանրային քննարկումների այս գործընթացը խիստ կարևոր է, այն փորձագետների խմբին հնարավորություն է տալիս հաշվի առնել մարզի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կարծիքները», ասաց տկն. Դոյոյանը: «Այսպիսով, քաղաքացիական հասարակությունն իր ներդրումն է ունենում նոր հակակոռուպցիոն ռազմավարությանը»:

Հանրային քննարկումների գործընթացը կշարունակվի հոկտեմբերին, որի ընթացքում տեղի կունենան կլոր սեղաններ և հեռուստատեսային թոք-շոուներ Արմավիրում և Երևանում:

# ՀԳՄԾ-ն կազմակերպում է «Կոռուպցիան առողջապահության ոլորտում» թեմայով դասընթաց

Առողջապահության ծառայություններին առնչվում են բոլորը. այս պատճառով, առողջապահության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարում անհրաժեշտ է գրանցել որոշիչ առաջխաղացումներ: Այդ նպատակով ՀԳՄԾ-ն սեպտեմբերի 27-ին կազմակերպել էր առողջապահության ոլորտում կոռուպցիայի վերաբերյալ դասընթաց դրամաշնորհային ապագա շահառուների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ-ներ) ներկայացուցիչների համար: Այդ դասընթացը վարում էին ՀԳՄԾ միջազգային խորհրդատուներ Թարին Վիանն ու Յեմիլե Միզրահին:



Թարին Վիանն ու Յեմիլե Միզրահին ներկայացնում են ուսուցողական նյութը

Ընդհանուր առմամբ ՔՀԿ-ների 12 ներկայացուցիչներ ուսումնասիրեցին հակակոռուպցիոն միջազգային լավագույն փորձը և ձեռք բերեցին մեթոդաբանություններ, գործիքներ ու ռեսուրսներ, որոնք ՔՀԿ-ները կկարողանան կիրառել առողջապահական ծրագրերն ու ծառայությունները վերահսկելիս: Ինտերակտիվ սեմինարը ներառում էր խմբային վարժություն, որի ընթացքում

մասնակիցները մշակեցին մոնիտորինգի ծրագրի մի մոդել, որը լավագույնս կիրականացվի արտաքին վերահսկողների կողմից, ինչպիսիք են ՀԿ-ները, և կմեծացնի քաղաքացիների մասնակցությունը կառավարության քաղաքականությունների և ծրագրերի նախագծմանն ու իրականացմանը:

## ՀԳՄԾ ֆորումը քննարկում է... էջ 1

ՀԳՄԾ-ի առաջին հակակոռուպցիոն ֆորումը, որը կազմակերպվել էր ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հետ համատեղ, տեղի ունեցավ հուլիսի 2-ին Երևանում, «Մարիոտ» հյուրանոցում: Ֆորումը կոռուպցիայի դեմ պայքարում Հայաստանի միջազգային պարտավորություններին անդրադարձավ մի լսարանի առջև, որը ներառում էր պետական և մասնավոր հատվածները, տեղական ՔՀԿ-ները և խոշոր միջազգային կազմակերպությունները:

Ֆորումը նախաձեռնեց երկխոսություն այն հարցի շուրջ, թե Հայաստանի նոր հակակոռուպցիոն ռազմավարության բովանդակությունը և Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի աշխատանքները ինչպես են համապատասխանացվելու երկրի ստանձնած միջազգային պարտավորություններին: Քննարկված երեք հիմնական պարտավորություններն էին ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիան, ՏՀԶԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանցը (Ստամբուլի հակակոռուպցիոն գործողությունների ծրագիրը) և Եվրոպայի Խորհրդի կոռուպցիայի դեմ երկրների խմբի (GRECO) շրջանակներում ստանձնած պարտավորությունները:

Բացման խոսքով հանդես եկան ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, ԱՄՆ գործերի ժամանակավոր հավատարմատար Ջոզեֆ Փենինգթոնը, ՄԱԿ-ի մշտական համակարգող Կոնսուելո Վիդալը և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի ղեկավար Սերգեյ Կապինոսը:

Վարչապետ Սարգսյանը շեշտեց կոռուպցիայի դեմ պայքարում քաղաքացիների ներգրավման կարևորությունը: «Մեզ համար չափազանց կարևոր է, որպեսզի այս ծրագրի մշակմանը, իրականացմանը և վերահսկողությանը մասնակցեն հանրության լայն շերտեր», ասաց նա: «Այս ձանապարհն է, որ հնարավորություն կտա հնարավորին կարճ ժամկետում ձեռք բերել հասարակության վստահությունը և ցույց տալ ռեալ արդյունքներ կոռուպցիայի դեմ պայքարում»:

Իր բացման խոսքում պրն. Փենինգթոնը նշեց. «Միացյալ Նահանգների կառավարությունը գնահատում է այն կարևոր քայլը, որը Հայաստանի կառավարությունն արդեն արել է, ստորագրելով մի քանի առանցքային պարտավորությունների ներքո: Այսօրվա ֆորումը կարևոր ասպարեզ է տրամադրում կառավարությանը, մասնավոր հատվածին և քաղաքացիական հասարակությանը՝ միավորվելու կոռուպցիայի դեմ պայքարում»:

Ֆորումի մասնակիցներն ակնառատես եղան կոռուպցիայի դեմ պայքարի շուրջ լարված, և միևնույն ժամանակ արգասաբեր քննարկման: Հաջորդ հակակոռուպցիոն ֆորումը տեղի կունենա 2008թ. աշնանը:

## 1-ին մաս 3-րդ թողարկում

«Ֆորումը նախաձեռնեց երկխոսություն այն հարցի շուրջ, թե Հայաստանի նոր հակակոռուպցիոն ռազմավարության բովանդակությունը և Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի աշխատանքները ինչպես են համապատասխանացվելու երկրի ստանձնած միջազգային պարտավորություններին...»

## ՀԳՄԾ-ն հայտարարում է Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնների հիմնադրման երկրորդ շրջանին մասնակցության հայտերի ընդունում

Առաջին հինգ Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնների (ՇՊԱԿ) բացման նախապատրաստմանը զուգընթաց ՀԳՄԾ-ն հայտարարել է առաջարկների ներկայացման հայտերի երկրորդ շրջանի մասին սեպտեմբերի 12-ին:

Արդյունքում ՇՊԱԿ-եր են հիմնվելու և գործարկվելու մնացած վեց մարզկենտրոններում՝ Աշտարակում (Արագածոտնի մարզ), Արմավիրում (Արմավիրի մարզ), Գավառում (Գեղարքունիքի մարզ), Հրազդանում (Կոտայքի մարզ), Արարատում (Արարատի մարզ) և Եղեգնաձորում (Վայոց Ձորի մարզ): Այս կենտրոնների աշխատանքները սկսվուց հետո ՀԳՄԾ-ն հիմնադրած կլինի հակակոռուպցիոն կենտրոններ Հայաստանի ամբողջ տարածքով:

Առաջարկների ներկայացման հայտերը վերաբերյալ հայտարելուց հետո, ՀԳՄԾ աշխատակազմը այցելեց Գավառ, Եղեգնաձոր և Երևան այդ մասին տեղեկացնելու և այդ բնակավայրերում հավանական դիմորդների հարցերին պատասխանելու նպատակով: Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 2008թ. հոկտեմբերի 11-ը:

## Հաջորդ թողարկման հիմնական թեմաները...

ՀԳՄԾ հաջորդ եռամսյակային լրատվաթերթիկը կներկայացնի տեղեկատվություն հետևյալ թեմաներով

- ՀԳՄԾ բացում է առաջին հինգ Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնները
  - ՀԳՄԾ-ն հայտարարում է կոռուպցիայի վերաբերյալ տնային տնեսությունների տարեկան հարցման արդյունքները
  - ՀԳՄԾ իր դրամաշնորհառուների համար կազմակերպում է կրթության ոլորտում կոռուպցիայի վերաբերյալ ուսուցողական հանդիպում
  - ՀԳՄԾ երկու դրամաշնորհ է շնորհում երիտասարդությանն միտված հակակոռուպցիոն հեռուստածրագրեր պատրաստելու համար
  - ՀԳՄԾ-ն նշում է կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային օրը
- ... և այլն

## «Կասալս Ենդ Ասոշիեյթս» Ինք. ընկերության մասին



«Կասալս Ենդ Ասոշիեյթս» Ինք. կառավարման և հաղորդակցության հարցերով զբաղվող միջազգային խորհրդատվական ընկերություն է, որը հանրային և մասնավոր սեկտորի իր հաճախորդներին օգնում է նոր գաղափարների և փոփոխությունների իրականացման գործում՝ տարբեր լեզվային և մշակութային համատեքստերում: Ընկերության գործունեության ոլորտներն են ժողովրդավարությունը և արդյունավետ կառավարումը, առողջապահությունը և սնունդի վերաբերող խնդիրները, էներգետիկ արդյունավետությունը և բնապահպանությունը, իմիգրացիոն խնդիրները, քաղաքաշինությունը և միջազգային հեռարձակումը: 1986-ին հիմնադրվելուց մինչ այժմ ընկերությունը գործունեություն է ծավալել Ամերիկայի Միացյալ Նահանգների ամբողջ տարածքով, ինչպես նաև աշխա երում: